

ՏԵՂԵԿԱՆՔ

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՆԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՂՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Հոդված 287. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը
գանգատարկելու կարգը**

~~Վարչական իրավախախտման վերաբերյալ գործով որոշումը կարող է գանգատարկվել՝~~

~~1) Վարչական հանձնաժողովի, անչափահասների գործերի հանձնաժողովի որոշումը՝ պատգամավորների համապատասխան խորհրդի գործադիր կոմիտե կամ շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարան, որի որոշումը վերջնական է:~~

~~2) պատգամավորների ավանային, գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի որոշումը՝ պատգամավորների շրջանային, քաղաքային, քաղաքի շրջանային խորհրդի գործադիր կոմիտե կամ շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարան, որի որոշումը վերջնական է:~~

~~3) այլ մարմնի (պաշտոնատար անձի) որոշումը տուգանքի ձևով վարչական տույժ նշանակելու մասին՝ վերադաս մարմնին (վերադաս պաշտոնատար անձին), կամ շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարան, որի որոշումը վերջնական է, այլ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը՝ վերադաս մարմնին (վերադաս պաշտոնատար անձին), որից հետո գանգատ կարող է տրվել շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարան, որի որոշումը վերջնական է:~~

~~Միաժամանակ հիմնական և լրացուցիչ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կարող է գանգատարկվել որոշումը գանգատարկող անձի ընտրությամբ հիմնական կամ լրացուցիչ տույժի համար սահմանված կարգով:~~

~~4) ոստիկանության (պաշտոնատար անձի) որոշումը նախազգուշացման ձևով վարչական տույժ նշանակելու մասին, որը կատարվել է իրավախախտման տեղում, առանց արձանագրություն կազմելու՝ վերադաս մարմնին (վերադաս պաշտոնատար անձին):~~

~~5) գինվորական ավտոմոբիլային տեսչության պաշտոնատար անձի որոշումը նախազգուշացման ձևով վարչական տույժ նշանակելու մասին, որը կատարվել է իրավախախտման տեղում, առանց արձանագրություն կազմելու՝ գանգատը քննելու իրավագոր վերադաս պաշտոնատար անձին:~~

~~Գանգատն ուղարկվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշում կայացրած մարմնին (պաշտոնատար անձին), եթե ԽՍՀՄ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան չի սահմանված: Ստացված գանգատը երեք օրվա ընթացքում գործի հետ միասին ուղարկվում է այն մարմնին (պաշտոնատար անձին), որը սույն հոդվածին համապատասխան իրավագոր է քննելու այն և որին հասցեագրված է գանգատը:~~

~~Վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշումը գանգատարկող անձից պետական տուրք չի գանձվում:~~

~~Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնվել է էլեկտրոնային փոստով, ապա այդ որոշումը կարող է գանգատարկվել նաև նույն էլեկտրոնային փոստով գանգատն ստանալու մասին էլեկտրոնային ծանուցմամբ:~~

[Վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման բողոքարկման կարգը](#)

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կայացրած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված վարչական կարգով՝ կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով, բազառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: **Վարչական ակտը չի կարող բողոքարկվել վարչական կարգով, եթե նույն վարչական ակտը վիճարկվել է դատական կարգով, իսկ եթե վարչական ակտի դեմ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ դատական կարգով վարչական ակտի վիճարկումից առաջ, այդ դեպքում վարչական մարմնի հարուցած վարույթը ենթակա է կարճման:**

Comment [U1]: ՀՀ Կարավարության կողմից ներկայացված առաջարկության հիման վրա լրացում

2. Սույն օրենսգրքի 10-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով բողոքարկվելուց հետո: **Սույն մասով սահմանված կարգով վարչական ակտի դեմ ներկայացված բողոքը քննվում է դրա ստացման օրվանից տասնհինգօրյա ժամկետում:**

Comment [U2]:

Comment [U3]: ՀՀ Կարավարության կողմից ներկայացված առաջարկության հիման վրա լրացում

3. -Որոշումը վարչական կարգով բողոքարկվում է վարչական ակտն ընդունած վարչական մարմին, վարչական մարմնի վերադաս վարչական մարմին կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավասու վարչական մարմնին: Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնվել է էլեկտրոնային փոստով, ապա այդ որոշումը կարող է ~~գանգատարկվել~~ **բողոքարկվել** նաև նույն էլեկտրոնային փոստով ~~գանգատն~~ **բողոքը** ստանալու մասին էլեկտրոնային ծանուցմամբ: